ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ (ՔՆՆԱՐԿՈՒՄ) ՄԱՍԻՆ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացնում է «Էլէկտրամատակարարման հուսալիության» ծրագիր, որն ուղված է Հայաստանում էլեկտրահաղորդման ցանցի հզորացմանը: Ծրագրի «110կՎ Լալվար և Նոյեմբերյան գծի փոխարինում» բաղադրիչի իրականացման արդյունքում կփոխարինվի 110կՎ Նոյեմբերյան օդային էլեկտրահաղորդման գիծը (ՕԳ), որը դուրս է գալիս «Ալավերդի-2» 220/110/35կՎ ենթակայանից և հասնում է մինչև Հաղթանակ գյուղում գտնվող «Նոյեմբերյան» 110/35կՎ ենթակայանը: Նախատեսվում է փոխարինել նաև 110կՎ Լալվար ՕԳ-ը, որը դուրս է գալիս նույն «Ալավերդի-2» ենթակայանից և հասնում է մինչև «Նոյեմբերյան» ենթակայանը: Ծրագծի ազդակիր համայնքներն են՝ Ալավերդի, Մեծ Այրում, Հաղպատ, Նեղոց, Ճոճկան (ՀՀ Լոռու մարզ) և Այրում (ՀՀ Տավուշի մարզ):

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման՝ 2017 թվականի հունվարի 20-ին ժամը 14:00-ին ՀՀ Լոռու մարզի Ալավերդու քաղաքապետարանում սահմանված կարգով տեղի կունենա հանրային լսում (քննարկում)՝ էլէկտրամատակարարման հուսալիության ծրագրի «110կՎ Լալվար և Նոյեմբերյան գծի փոխարինում» բաղադրիչի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ:

Գործունեության իրականացումը շրջակա միջավայրի վրա կունենա որոշակի ազդեցություն:

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ում՝ հասցե՝ Զորավար Անդրանիկի 1, ք. Երևան, ՀՀ (010 72 02 70) կամ http://www.hven.am պաշտոնական կայքում, կամ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու քաղաքապետարանում: Գրավոր դիտողություններ և առաջարկություններ կարելի է ներկայացնել ծանուցումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: